

# ՊՁՏԻԿ-ՄՁՏԻԿ



«ԱՋԴԱԿ»Ի

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ

Ա. ՏԱՐԻ

ԽԻՒ 6

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2002

bezdig\_mezdig@hotmail.com

## ՄԷԿ ՁԵՌՔՈՎ ԾԱՓ ՉԻ ԶԱՐՆՈՒԻՐ

«Մէկ ձեռքով ձափ չի վար- նոփր», կ'ըսեն մեր մեծերը: Իմաս- տուն խօսք է: Բայց կը մտածեմ, որ ինչքու ըսուած է այս խօսքը: Անշուշտ մէկ ձեռքով կարելի չէ ձափել. մէկ ձեռքով կրնաս միայն ձայն ու աղմուկ հանել, սակայն շնորհքով ձափել՝ ո՛չ: Եթէ կ'ու- վես հանդէսի մը աւարտին գնա- հատականդ քաղաքավարօրէն արտայայտել, կը ձափահարես, այսինքն երկու ձեռքերդ կ'օգ- տագործես: Ուրեմն, երկու ձեռքը մէկէն աւելի լաւ է:

Գիտէ՞ք, երբեմն կը մտածեմ, որ՝ «լա՛ւ, եթէ երկուքը մէկէն ա- լելի լաւ է, ուրեմն որքան աւելի լաւ պիտի ըլլար, եթէ չորս, վեց կամ աւելի ձեռքեր ունենայի»:

Երեւակայեցի, որ հաւանաբար իմ ունեցած շատ ձեռքերովս ձափահարելու փոխարէն ներ- դաշնակ եղանակներ արտաբե-

րէի եւ առանձին նուագախումբ կազմէի:

Երեւակայելը լաւ է, բայց իրականութենէն բաւական հեռու է: Իմ մա երկու ձեռք ունիմ. Աս- տուծոյ գործին ալ չեմ ուզեր խառնուիլ: Դարձեալ մտածեցի. լա՛ւ, եթէ շատ կը փափաքիմ նուագախումբ ունենալ, կրնամ ընկերներուս դիմել: Անոնք ալ ձեռքեր ունին, ինձի չափ ալ կրնան մտածել, եւ հաւանաբար իրենք ալ կ'ուզեն նուագախումբ կազմել: Ուրեմն, եթէ երկու ձեռ- քով նուագախումբ չեմ կրնար կազմել, ընկերներուս հետ մեր բազմաթիւ ձեռքերով եւ հաւա- քական աշխատանքով կրնանք նուագախումբը յառաջացնել: Դի- մեցի իրենց:

Չէ՞ք կարծեր, որ արդէն նուա-

գախումբը կազմեցի... Ինչ դի- րին է եղեր: Բայց մոռցայ ձեզի ըսելու յաջողութեանս գաղտնիքը: Ընկերներուս հետ աշխատելու ընթացքին բնաւ չհպարտացայ, բնաւ չըսի, թէ այսմէկը իմ գա- դափարս է, ուրեմն ես պէտք է ձեր առաջնորդը ըլլամ: Բոլոր ընկերներս յարգեցի եւ իրենց փոքր սխալներէն անմիջապէս չնեղացայ: Բոլորին ունեցած ծիրքերը գնահատեցի, իրենց հետ հանդարտօրէն ու առանց ձայնս բարձրացնելու խօսեցայ, բոլորին ալ հաւասար արժէք ու գործ տուի: Իսկ, ամէնէն կարե- լորը, ժպիտը միշտ երեւցաւ դէմ- քիս վրայ: Կարճ ժամանակ ետք իրենք ալ վարակուեցան, եւ մեր հաւաքական գործը յաջողանալու

համար բոլորս ալ նոյն ձեռով վարուեցանք իրարու հետ:

Օր մը, նուագախումբի փորձէն յոգնած, հեռատեսիլի «Նէշընըլ Ճիոկրաֆիք» կայանը կը դի- տէինք: Օրուան դերասանները մրջիւններն էին: Այդ որքան շատ էին, բայց մէկ մարդու պէս կ'աշ- խատէին, իրարու կ'օգնէին: Առանց խօսելու հաւաքական կամ խմբային յաջող աշխատանք կը տանէին: Ուրախացանք, որովհետեւ մենք ալ կը նմանէինք կենդանական աշխարհին մէջ ամէնէն աւելի աշխատասէր եւ խմբային գործին հաւատարմող մրջիւններուն:



## ԻՎԻԿԱԿԱՆ ԱԾՈՒՄՆԵՐ՝ ԱԻՆԼԻ ԼԱԻ ԱԾՈՒԱՐԻՒՄԸ ԵՎ ԻՎԱՄԱՐ

Աշխարհի մէջ մեծ է թիւը անօթի եւ առանց դպրոցի մնացող մա- նուկներու, որոնք, հիւանդանալու պարագային, նոյնիսկ վրկուած են բժշկական խնամքէ: Նաեւ կան միլիոնաւոր մարդիկ, որոնք չունին բաւարար չափով ջուր, չեն ապրիր առողջապահական միջավայրի մէջ եւ կտրկ են մաքուր օդէ: Միւս կողմէ, նոյնպէս մեծ է թիւը անոնց, որոնք իրենց պէտք եղածէն աւելի ուտելիք եւ ջուր ունին:

Ինչ պէտք է ընել այս վիճակը բարեփոխելու համար: Երկրագունդին այս հարցերուն լուծում գտնելու նպատակով 26 Օգոստոսէն 4 Սեպտեմբեր ճոհանեսպուրկի մէջ (Թարաւային Ափրի- կէ) տեղի ունեցաւ երկրագունդի վեհաժողովը: ՄԱԿի կազմակերպած

այս վեհաժողովին մասնակցեցան 185 երկիրներէ շուրջ 65 հազար պատասխանատուներ:

Վեհաժողովին մասնակցողները մտածեցին, թէ ի՞նչ կարելի է ընել, որպէսզի հաւաքական աշխատանքով կարելի ըլլայ պակսեցնել սո- վահարներու, հիւանդներու եւ աղքատներու թիւը: Անոնք նաեւ ճրա- գիրներ մշակեցին ապագային աշխարհը պաշտպանելու համար սովէ, հիւանդութենէ, ապականած օդէ եւ այլ աղէտներէ:

Իմ մա կը մնայ, որ աշխարհի դեկավարները դարձեալ հաւա- քական աշխատանքով իրականացնեն այս ճրագիրները:

ملحق أوقاتك



# ԼՕՄԻ ԿԱԶՊՈՒՐՄԱՆ ԿԱՅԱՆԻ ՔԱՆԱԿՈՒՄ

Ամեն տարի Լիբանանահայ Օգնության Խաչը Այնճարի մէջ կը կազմակերպէ Կազդուրման կայան մը: Գիւղական գեղեցիկ միջավայրի ու մաքուր օդի մէջ տասնեակներով հայ երեխաներ կը հաւաքուին Լիբանանի վանապան շրջաններէն՝ միասին անցընելու համար ամրան արձակուրդի երեք շաբաթներ:

Այս տարի եւս, 5էն 25 Օգոստոսին պատասխանատու ուսուցիչներու հսկողութեամբ աւելի քան յիսուն մանուկներ եւ պատանիներ ունեցան դաստիարակչական պահեր, սորվեցան նոր երգեր եւ պատմութիւններ, խաղացին խաղեր եւ պատրաստեցին ձեռագործ աշխատանքներ: Անոնք իրենց ամրան արձակուրդին մէկ մասը անուշիկ բնութեան գեղեցկութեան եւ ընկերային մթնոլորտի մէջ:

Անշուշտ պէտք չէ մոռնանք հետաքրքրական պտոյտները: Կազդուրման կայանին մասնակցող երեխաներն ու պատանիները այցելեցին Այնճարի հին բերդը, պտտեցան գիւղին վանապան վայրերը եւ այցելեցին այլ տեղեր:



## ԼԻՔԱՆԱՆԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՔԱՆԱԿՈՒՄ



Լիբանանի Պատանեկան Միութիւններու կրտսերներու բանակումը տեղի ունեցաւ Այնճարի մէջ, 13-18 Օգոստոս 2002ին: Բանակումին մասնակցեցան 103 պատանիներ (9-12 տարեկան): Բանակումին կեդրոնական թեման Ճուշիի ապատագրման 10րդ տարեդարձն էր: Տեղի ունեցան դասախօսութիւններ, մարզական

խաղեր, գիշերային եւ ցերեկային արշաւներ, երգի, վարճացման եւ այլ մարզական խաղերու մրցումներ:

Բանակողները բաժնուած էին 4 խումբերու՝ Ասկերան, Մարտակերտ, Մարտունի, Բաղրուօ:

Երէցներու բանակումը, որուն մասնակցեցան շուրջ 160 պատանի-պարմանուհիներ, դարձեալ տեղի ունեցաւ Այնճարի մէջ, 18-25 Օգոստոսին: Պատանիները լաւապէս ճանօթացան Արցախի աշխարհագրական դիրքին, պատմութեան եւ ապատագրական պայքարին: Տեղի ունեցաւ կլոր սեղան՝ բանակցութիւններու ներկայ իրավիճակին մասին, վարճացման մրցում եւ «*ուշի փէյփըր*»: Պատանիները նաեւ մասնակցեցան մարզական մրցումներու, արշաւներու եւ խաղերու: Բանակողները բաժնուած էին չորս խումբերու՝ Թաթուկ Կրպէեան, Վիգէն Զաքարեան, Կարօտ, Մհեր Զուկհաճեան. բանակումի ընթացքին խումբերը մրցեցան իրարու հետ, նաեւ անոնք ներկայացուցին չորս տարբեր ոճի Արցախի քարտէսներ:

Բանակումի իւրաքանչիւր օր ունէր իր կարգախօսը, որ կը քննարկուէր խումբերուն կողմէ:

Անշուշտ զոյգ բանակումները երափակուեցան աւանդական խարուկահանդէսով:



# Դ.Բ.Ը.Մ.-Դ.Ե.Ը. ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ԲԱՆԱԿՈՒՄ



21-25 Օգոստոս Ջմառի բանակավայրին մէջ տեղի ունեցաւ Դ.Բ.Ը.Մ.-Դ.Ե.Ը.ի միջ-մասնաճիւղային եւ շրջանային բանակումը, որուն մասնակցեցան ոչ միայն Լիբանանէն, այլ նաեւ՝ վանապան երկիրներէ եկած սկաուտներ:

Ինչպէս բոլոր բանակումները, այս մէկը եւս կը հետապնդէր պատանիներուն բնութեան մէջ հաճելի եւ դաստիարակչական պահեր պարգեւելու եւ անոնց ընկերական կապերը ամրապնդելու նպատակը:

Բանակումին փակման օրը տեղի ունեցաւ բոլորին կողմէ սպասուած բաժինը՝ խարուկահանդէսը, որուն ներկայ գտնուեցան նաեւ մեծ թիւով ճնողներ եւ բարեկամներ: Խարուկահանդէսէն առաջ բանակումին մասնակցած սկաուտները տողանցեցին, ապա տեղի ունեցաւ հանդիսութիւն մը, որուն ընթացքին խօսք առին սկաուտական պատասխանատուներ: Անոնք շեշտեցին սկաուտին պարտականութիւնները՝ հանդէպ ազգին, հայրենիքին, ընկերութեան եւ միջավայրին:

Բնականաբար խարուկահանդէսին ընթացքին գործադրուեցաւ գեղարուեստական ծոխ յայտագիր մը: Սկաուտներ ներկայացուցին խմբերգներ, պարեր, արտասանութիւններ եւ սկաուտական ներկայացումներ:

## ՊԱՏԱՆԵԱՅԻ ԲԱՍԱԳՈՒՄԱՐ

26 Օգոստոսէն 1 Սեպտեմբեր Այնճարի մէջ 62 պատանի-պարմանուհիներ մէկտեղուած էին մաս կազմելու Բայ Աւետ. եկեղեցիներու կազմակերպած Միացեալ Պատանեաց համագումարին: Պատանիները բաժնուած էին 10 խումբերու, առաջնորդներու հսկողութեան ներքեւ: Ծաբթուան թեման՝ «Յրդ վգայարանն ու անոր վայելուչ գործածութիւնը» առաւօտեան պաշտամունքներուն կը ներկայացնէր հիւր դասախօս Պատ. Վաչէ Էքմէքեան, որմէ ետք խումբերը առանձնանալով հաւաքական սերտողութիւն եւ «workshop» կը կատարէին նիւթին շուրջ: Նշենք, որ



առաւօտեան պաշտամունքէն առաջ տեղի կ'ունենար մարվանք, ապա «մենիկ» պահ, երբ պատանիները առանձին Ս. Գիրքէն ընթերցումներ կը կատարէին: Յետմիջօրէին անոնք կը մասնակցէին պտոյտներու, խաղերու, լողալու, իսկ երեկոյեան «Talent Show»-ին իրենց մասնակցութիւնը կը բերէին:

# Դ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌՈՒՏԱԿԱՆ ՄԻՋ – ՄԱՍՆԱԾԻՒՊԱՅԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ

Դ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Պէյրութի, Պուրճ համուտի, Անթիլիասի, Ժտէյտէի եւ Պաուշրիէի մասնաճիւղերու սկաուտները այս տարի առիթ ունեցան բանակումը միասնաբար անցընելու: 2էն 7 Սեպտեմբերին Պեքաա դաշտին Անա Քֆրայա շրջանին մէջ շուրջ 500 գայլիկներ, արճուիկներ, արիներ արենոյշներ, երէցներ ու պարմանուհիներ բնութեան մէջ լարեցին իրենց վրանները եւ անցուցին սկաուտական անմոռանալի օրեր:

Իւրաքանչիւր մասնաճիւղ ունէր իր առանձին բանակատեղին, յայտագիրները, աշխատանքները եւ դասախօսութիւնները: Բոլոր սկաուտները պատրաստեցին սկաուտական ճեռային աշխատանքներ, փայտերէ պատրաստուած փարոսներ, բանակավայրի մուտքի դռներ, դրօշակի ձողեր, ինչպէս նաեւ՝ հայկական յուշակոթողներու փայտէ նմանակներ:

Իւրաքանչիւր օրուան աւարտին տեղի կ'ունենար խարուկահանդէս, որուն ընթացքին սկաուտները կը ներկայացնէին իրենց սորված եւ պատրաստած երգերը, կենդանի պատկերները, թատերական փոքր ներկայացումները, սկաուտական խաղերը եւ կանչերը: Բանակումը ունէր նաեւ իր ռատիոժամը, որուն ընթացքին բանակող մասնաճիւղերը ներկայացուցին իրենց խումբերուն անունները եղող անձնաւորութիւններու կամ կենդանիներու մասին տեղեկութիւններ, երաժշտական յայտագիրներ եւ շրջանային խմբապետերու հետ հարցազրոյցներ:



Անշուշտ պէտք չէ մոռնալ սկաուտական արշաւները, բնութեան ճանօթանալու պահերը եւ պտոյտները: Սկաուտները հետախույզական արշաւներ կատարեցին բանակավայրին շուրջ, ինչպէս նաեւ բոլորը միասին այցելեցին Պէյթատիւնի պալատը եւ Քասր Մուսա:

Բանակումին հետաքրքրական բաժիններէն մէկը անկասկած խարուկահանդէսն էր, երբ սկաուտներուն ճնողները այցելեցին բանակավայր եւ մեծ ասանդակային խարոյկի մը շուրջ ներկայ կը գտնուին սկաուտներուն պատրաստած գեղարուեստական յայտագիրին, սկաուտական չարքաշ խաղերուն եւ կանչերուն:

Դ.Մ.Ը.Մ.ի բանակումը եւ խարուկահանդէսը վերջ գտան «Յտեսութիւն» երգով: Իրենց ապրած անմոռանալի պահերուն յիշատակով սկաուտները «Դարձեալ իրար կը հանդիպինք»-ի խոստումով մեկնեցան իրենց տունները:



# ԱՄԷՆԷՆ ՏԱՐԵՅ ԱՄԵՐԻԿԱՅԻՆ ԿՐ ՄԱԳԱՆԱՅ 114 ՏԱՐԵԿԱՆ ԲԱՍԱԿԻՆ



Միացեալ Նահանգներու ամէնէն տարեց կինը՝ Ատելինա Տոմինիկէպ, վերջերս մահացաւ քնանալու պահուն: Ատելինա մինչեւ 107 տարեկան ինքնաբաւ էր եւ կ'ապրէր առանձինն, իսկ մինչեւ 100 տարեկան ան կը թուէր կէտ: Միայն վերջին եօթը տարիներու ընթացքին է, որ Ատելինա կ'ապրէր հանգստեան տան մը մէջ:

Ըստ այդ տան պատասխանատուին, Ատելինա շատ հաստատամիտ կին մըն էր, լաւ գիտէր, թէ ինչ կ'ուզէր եւ ինչ են իր պէտքերը:

Ատելինա ճնած էր Քէյփ Վերտէ կղզիներուն մէջ, 19 Փետրուար 1888ին:

Ըստ իր թոռնուհիին, Ատելինայի համար իր երկարակեցութեան ամէնէն դժուար բաժինը իր սիրելիներուն բաժանումն էր: Անոր չորս պաւակները, ամուսինը, եղբայրները եւ քոյրերը մահացած էին իրմէ առաջ:

Ատելինա ընդհանրապէս կը սնանէր թարմ պտուղներով եւ բանջարեղէններով ու երբեք չէր գործածեր ալքոլ ու ճիւղտ:

Ներկայիս Միացեալ Նահանգներու ամէնէն տարեց անձը Ֆլորիտայէն 113 տարեկան Ճոն Աքմորընն է: Իսկ աշխարհի ամէնէն տարեց անձը ճափոնցի Քամաթօ Բանկոն է, որ ճնած է 16 Սեպտեմբեր 1887ին:

# ՃԱՓՈՆԻ «ՍԱՌԷ ԶԿՆԱՐԱՆԸ»

Ճափոնի մէջ արձակուրդի ընթացքին հետաքրքրական վայր տեսնել փափաքողները կ'այցելեն «Սառէ ձկնարանը», ուր... սառի մէջ պահուած են 80 տեսակի 450 ձուկեր:

«Ձկնարանը» կազմուած է 40 սառի կտորներէ, որոնցմէ իւրաքանչիւրը կը կշռէ 100 քկ.: Կապոյտ լոյսով լուսաւորուած սառերուն մէջէն կ'երեւին շատ գեղեցիկ գոյներով ձկնիկներ, որոնք լողալու ընթացքին սառեցուած են:

«Ձկնարան»ին ջերմաստիճանը - 20 է:



Սակայն այս սառէ ձկնարանը այցելողները սաստիկ ցուրտին պատճառով հոն կրնան մնալ միայն քանի մը վայրկեան:



«ԻՐԱՆԻ» ՄԱՆՈՒԿԸ

Անհաւատալի, բայց իրաւ երեւոյթ մը: Չինացի եօթը ամսուան մանուկ մը՝ Կիանկ Եաթուն յաջողած է մտնել մրցանիշներու «Կիւնտ»ի գիրքը:

30 Յունուար 2002ին ճնած այս «հրաշք» մանուկը կրնայ... մէկ ոտքի վրայ կենալ եւ հորիզոնական ձողերու վրայ ճօճուիլ աւելի քան կէս վայրկեան: Անոր հասակը 66,56 սմ. է, իսկ ծանրութիւնը՝ 7,7 քկ.:

Արդեօք ապագան ինչ կը խոստանայ այս մարդիկ մանուկին:



## ԻՐԱՆԻ ՄԷՋ ԹԱՐՄԻԻ ԿԻՆ ՎԱՐՈՐԴՆԵՐ

Իրանի հարաւը գտնուող Քոմ սուրբ քաղաքին մէջ կիններու եւ 15 տարեկանէն վար մանուկներու եւ պատանիներու համար կազմուած է թարմի յատուկ ընկերութիւն մը:

Այս ընկերութեան տասը ինքնաշարժներուն վարորդները կիներ են: Անոնք առաւօտեան ժամը 7:00էն մինչեւ երեկոյեան ժամը 4:00 պիտի սպասարկեն կիններուն եւ երեխաներուն:

## ՈՒՏԻՃՆԵՐՈՒ

### ՄՈՒՏՔԸ՝ ԱՐԳԻԼՈՒԱԾ

Թայլանտի իշխանութիւնները արգիլած են ուտիճներու ներածումը, որովհետեւ անոնց թիւը շատ բազմացած է: Ծատերու մօտ վզուանք յառաջացնող այս միջատները Թայլանտի մէջ սիրուած... ընտանի անասուններ են:

Թայլանտցիները, որոնք կը սիրեն ճպուռներու եւ մարախներու նման միջատներ ուտել, յատուկ գուրգուրանք ունին 10 սմ. երկարութեամբ ուտիճներուն հանդէպ: Պանթոթի մէջ անոնց իւրաքանչիւրը կը ճախուի 1,20 տոլարի: Տարօրինակ ծաշակ...

Ձեր գրութիւնները կամ նամակները կրնաք ուղարկել՝ [bezdiq\\_mezdiq@hotmail.com](mailto:bezdiq_mezdiq@hotmail.com) կամ լրանձնել՝ «ՊԵՏԻՆ-ՄԱՅԻՆ»-ի իւնիթագրութեան, «ԱՅԼԱՅ» «Յաղպոյթան» կեդրոն:



# ՄՐՋԻՆՆԵՐՈՒՆ ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔԸ

Ով ճանօթ չէ Լա Ֆոնթենի «Ճպուռը եւ մրջինը» առակին, Ով չէ լսած մրջինին աշխատասիրության եւ խմբային աշխատանքին մասին:

## ԽՄԲԱՅԻՆ ԿԵԱՆՔ

Յայտնաբերուած են մրջիններու աւելի քան 15 հազար տեսակներ, որոնք, որոշ տարբերութիւններով հանդերձ, ունին նոյնանման ապրելածեւ, աշխատանքային կեանք, բաժանումներ եւ սննդականոն: Գրեթէ բոլոր մրջինները կը սիրեն ապրիլ հաւաքաբար եւ խումբերով: Մրջիններու խումբին մէջ կան տարբեր մակարդակի մրջիններ: Արու մրջինները, որոնք ունին թեւեր, բնաւ մասնակից չեն խումբին աշխատանքներուն:

## ՄԵԾ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ

Թագուհի մրջինները կրնան մինչեւ 15 տարի ապրիլ: Անոնք թագուհի կը կոչուին, ոչ թէ որովհետեւ կը կառավարեն խումբը, այլ պարզապէս՝ որովհետեւ կ'աճեն հաւկիթները, որոնք կը վերածուին մրջիններու: Աշխատող մրջինները թեւեր չունին եւ կազմուած են այն էգ մրջիններէն, որոնք չեն

կրնար հաւկիթ աճել: Անոնք չափով աւելի պստիկ կ'ըլլան: Աշխատողները կա՛մ կը մնան բոյնին մէջ եւ կը կերակրեն թագուհին ու անչափահաս մրջինները եւ կամ իրենց ժամանակը կ'անցընեն ուտելիք փնտռելով:

Մրջինները իրենց բոյնէն կը հեռանան եւ բոյն կը վերադառնան գործածելով իրենց տեսողութեան, հոտառութեան եւ շօշափելու զգայարանները:

Փորձէ հետեւիլ մրջինի մը: Լուցկիի տուփով բանտարկէ վայն, քանի մը վայրկեաններ ետք հանէ տուփէն: Մրջինը սկիզբը ինքզինք պիտի կորսնցնէ, սակայն ետ պիտի գտնէ իր նախկին ուղղութիւնը եւ շարունակէ ճամբան:


## ՁԵՆՔ ՁԵՆՔԻ ՏԱԼՈՎ

Բետաքրքրական երեւոյթ է, որ երբ մրջին մը գտնէ ուտելիքի կտոր մը, յանկարծ մըրջիններու մեծ խումբ մը կը հետեւի անոր, որպէսզի օգնեն ուտելիքի մնացորդը վերցընելու եւ բոյն փոխադրելու. ինչպէս մրջինները գիտցան, թէ ինչ կը պատահի... որովհետեւ ծարպիկ մրջինը, որ գտաւ ուտելիքը, անմիջապէս հիւթ մը կ'արձակէ,

որուն կը հետեւին միւս բոլորը իրենց շօշափուկներուն միջոցով:

Բետաքրքրական բաներ կրնաս սորվիլ մրջինները դիտելով. խնձորի կտոր մը դիր գետին (տեղ մը՝ ուր գիտես որ մրջին կայ), երբ մրջինը գտնէ խնձորը, փոխէ անոր տեղը:

Ինչ տեսար... Ինչ պատահեցաւ... ինչո՞ւ... □



# ՃԱՐԺԱՊԱՏԿԵՐԻ ԱԾՌԱՐԻՔՆԵՐ

Ձեզմէ անոնք, որոնք կը սիրեն շարժապատկերի սրահներ յաճախել, կրնան օգտուիլ ամրան արձակուրդի վերջին օրերէն եւ դպրոցները սկսելէն առաջ դիտել մանուկներու յատուկ հետեւեալ ժապաւէնները:

### ●«ԲԷԼՓ, ԱՅՍ Ե ՖԻԾ»

Կրնաք երեւակայել, թէ ինչպիսի՛ կեանք մը պիտի ունենաք, երբ... ծուկի վերածուիք: «Բէլփ, այժ է ֆիշ» կենդանի գծանկարին մէջ երեք պատանիներ, խենթ գիտնականի մը կախարդական հեղուկը խմելէ ետք, սխալմամբ կը վերածուին ծուկերու: Այսպիսով, անոնք կ'այցելեն ճովուն Բետաքրքրական աշխարհը, ուր կ'ապրին արկածախնդրական պահեր:

### ●«ՍՓԻՐԻԹ»

Այս ժապաւէնը նոյնպէս կենդանի գծանկար մըն է եւ կը ներկայացնէ Ամերիկայի դաշտերուն մէջ ազատ եւ ուրախ կեանք ապրող քաջ ձիու մը՝ Սփիրիթին



պատմութիւնը: Ժապաւէնին մէջ կը տեսնենք, թէ ինչպէս Սփիրիթ կը մեծնայ՝ սորվելով ըլլալ քաջ եւ ազնիւ: Ան անշուշտ կ'ունենայ դժուարութիւններ, զորս սակայն կը յաղթահարէ իր քաջութեան շնորհիւ:


### ●«ՍԹԻՈՒԸՐԻԹ ԼԻԹԸԼ - 2»

Ձեզմէ ո՞վ չէ սիրած այս համակրելի մկնիկին առաջին ժապաւէնը: Ժապաւէնին երկրորդ բաժինին մէջ Սթիուըրթ Լիթըլ ընտանիքին հետ կ'ապրի ուրախ կեանք մը:


Ան դպրոց կ'երթայ, ունի իր սեփական սենեակը եւ նոյնիսկ... գեղեցիկ, կարմիր ինքնաշարժ մը: Ան կը բարեկամանայ Մարկըլոյին՝ չար բազէի մը կողմէ հալածուած թռչնիկի մը: Սակայն դէպքերը ցոյց կու տան, որ Մարկըլօ ուրիշ պատճառներով կը գտնուի բազէին տիրապետութեան տակ եւ Սթիուըրթ ամէն ինչ կ'ընէ ազատելու համար իր նոր ընկերը:

### ●«ԼԻԼՕ ԵՆՏ ՍԹԻՉ»


«Տիպի»ի այս արտադրութիւնը կը ներկայացնէ նոր եւ իւրայատուկ պատմութիւն մը: Լիլօ հաուայցի առանձին աղջնակ մըն է, որ շնիկ կարծելով, «կ'որդեգրէ» արտերկրային էակ մը՝ Սթիչը: Անոնք կը բարեկամանան եւ կը դառնան հաւատարիմ ընկերներ: Ծատ գեղեցիկ նկարահանումով եւ գոյներով այս ժապաւէնը հաճելի պահեր պիտի պարգեւէ մանուկներուն: □



1. Պզտիկ - Մզտիկը որ պարանով կը բռնէ ձուկը:




Պզտիկ - Մզտիկ կը փորձէ իր մկանները պորպանել: Ան քանի քիւս կը վերցնէ:




Կրնա՞ս գտնել ճաղկամանին համապատասխանող շուքը:

Ժամանցի պատասխանները լոյս պիտի տեսնեն «Ազդակ»ի ճարքթ, 21 Սեպտեմբեր 2002ի թիւին մանկապատանեկան էջին մէջ:



2. Կէտերը իրարու միացուր 1 - 45 գտնելու համար պահուած պատկերը:



3. Դրօշակները ներկէ հետեւելով թիւերուն: 1 = կարմիր, 2 = կապոյտ, 3 = դեղին: Որ երկիրներուն կը պատկանին այս դրօշակները:

ԱՄՍՈՒԱՆ ԲԱՐՅՈՒՄԸ

Կրնան մասնակցիլ Յէն 12 տարեկան աշակերտները: Կտրօնը ամբողջացնելէ ետք հասցնել «ԱԶԴԱԿ»ի խմբագրատուն: Յաջորդ թիւով պիտի յայտարարուի մրցանքը շահողին անունը: Ան պիտի ստանայ նուէր մը:

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 6

1.- Որ քաղաքին մէջ տեղի ունեցաւ երկրազունդի վեհաժողովը:-----

2.- Թագունի մրջիւնը քանի տարի կրնայ ապրիլ:-----

3.- Որ երկիրը տիրացաւ պասքեթպոլի աշխարհի ախոյեանութեան:-----

Անուն - Մականուն -----

Վարժարան -----

Ծննդեան թուական -----

Բեռածայնի թիւ -----

ԲԱՐՅԱՐԱՆ ԹԻՒ 5Ի ՃԱԲՈՂԸ

Բարցարան թիւ 4ի շահողը Նարեկ Ատուրեան (7 տարեկան «Ճամբեան Թաթիկեան»էն) շահեցաւ անցեալ ամսուան մրցանքը: Ան իր նուէրը կրնայ ստանալ «Ազդակ»էն. «Ճաղկոյեան» կեդրոն:



# ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐՈՒ ԾԱԿԱՏՈՒՄԸ



Ձեզմէ շատերը հաւանաբար դիտած են վինչու եւ Սերենա Ուիլիզմս քոյրերուն ծակատիրը, սակայն երբեք տեսած էք իրարու դէմ ծակատող երկուորեակներ:

Այս տարի եու. էս.Օփըն թենիսի մրցաշարքին, ամերիկացի երկուորեակ եղբայրներ՝ Մայք եւ Պոպ Պրայըն, որոնք իրարմէ 2 վայրկեան տարբերութեամբ ճնած են, խառն զոյգերու աւարտականին հասնելով՝ իրենց անունը արձանագրեցին թենիսի պատմութեան մէջ:

Մրցումը վերջ գտաւ Մայքի եւ իր զոյգին՝ Լիսա Ռէյմընտի յաղթանակով, որոնք 7-6 եւ 7-6 արդիւնքով պարտութեան մատնեցին Պոպն ու Քաթարինա Սրեպոթնիքը:

Պէտք է ըսել նաեւ, որ Պրայըն եղբայրները հասան տղոց զոյգերու կիսաւարտականին ալ, սակայն տեղի տալով՝ հետաքրքրական պայքարը պահեցին խառն զոյգերու մրցումին:

# ԱՆՊԱՐՏԵԼԻՔ... Ո՛Ջ

Եուկոսլաները կը տօնեն իրենց տարած պատմական յաղթանակը

Երբ պասքեթպոլի մասին մտածենք, շուտով կը մտաբերենք էն.Պի.էյ.ն ու ամերիկեան «Տրիմ թիմ»ը:

Սակայն, արդեօք ամերիկացիները իրապէս անպարտելիք են... Ո՛չ:

Այս ամիս ինտիանափոլիսի մէջ տեղի ունեցած աշխարհի պասքեթպոլի ախոյեանութեան մրցումներուն ամերիկացիները յուսախաբ ըրին իրենց բոլոր համակիրները, երբ իրենց երկրին մէջ յաջորդական երկու պարտութիւններ կրելով դուրս մնացին պայքարէն:

1992էն ի վեր առաջին անգամ ըլլալով ամերիկացիները կը մասնակցէին էն.Պի.էյ.ի աստղերով. հակառակ ասոր սակայն, անոնք ամօթալի պարտութիւններ կրեցին եւ նախապէս ձեռք բերուած յաջորդական 58 յաղթանակներու շղթան կտտրեցին:

Այսպիսով, Արժանթինէն եւ եուկոսլաւիայէն պարտուելով, «Տրիմ թիմ»ը երկար ժամանակէ ի վեր իր կրած «անպարտելի» տիտղոսը կորսնցուց:



մանակէ ի վեր իր կրած «անպարտելի» տիտղոսը կորսնցուց: Անհաւատալի, բայց իրաւ...

# ԱՍԻՈՅ ԱՄՍՈՒԱՆ ԼԱԽԱԳՈՅՆ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏԸ

Այս ամսուան սկիզբը Ասիոյ ֆութպոլի ֆետերասիոնը ծափոնցի երիտասարդ միջնապահ Ճունիչի Ինամոթոն հռչակեց Ասիոյ ամսուան լաւագոյն ֆութպոլիստը:

Մոնտիալին ընթացքին Ինամոթօ նշանակած էր 2 կոլ եւ իր խումբին՝ Ճափոնի հետ հասած էր Բ. հանգրուան: Ան այս տիտղոսին արժանացաւ, որովհետեւ վերջերս տեղի ունեցած «ԻՆԻՏԵՐՆԵՏԻՈ» բաժակի մրցաշարքի աւարտական մրցումին հէթ-թրիք մը իրագործեց իր խումբին՝ Ֆուհամի (Անգլիա) հետ:

.Չէք կարծեր, թէ Ինամոթօ, որ Սեպտեմբեր 18ի ճնունդ է, տարեդարձի բաւական արժէքաւոր նուէր մը ստացաւ Ասիոյ ֆետերասիոնէն...



## «ԱՐԵՎ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ

**«ԱՐԵՎ»ը կը վերսկսի 2002 - 2003 տարեշրջանի իր աշխատանքներուն:**

Արձանագրութիւնները, հին եւ նոր աշակերտներուն համար տեղի պիտի ունենան **Շաբաթ, 28 Սեպտեմբեր, կէսօրէ առաջ ժամը 10:00էն 12:00: «Լ. Շանթ» կեդրոն, Յրդ յարկ, վարչութեան գրասենեակը:**

**ՎԵՐԱՄՈՒՏ՝ Շաբաթ, 5 Հոկտեմբեր**

ՀԱՄԱՋԳԱՅԻՆԻ «ԱՐԵՎ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ

9/11

Ամերիկայի Միացեալ Նահանգները 11 Սեպտեմբեր 2002ին մեծ շուքով յիշատակեցին Նիւ Եորքի, Փենթակոնի եւ Փենսիլվանիոյ 11 Սեպտեմբեր 2001ի ահաբեկչական յարձակումներուն զոհներուն յիշատակը: Երկրին բոլոր նահանգներուն մէջ տեղի ունեցան հոգեհանգստեան արարողութիւններ եւ կազմակերպուեցան յիշատակի հանդիսութիւններ:



Նիւ Եորքի մէջ ժամը 8:46ին, այն ժամուն, երբ անցեալ տարի օդանաւերուն առաջինը բախած էր համաշխարհային Առեւտուրի կեդրոնի առաջին աշտարակին,



Նիւ Եորք առանց «Թուին Թաուըր»ներուն

մէկ վայրկեան լռութեամբ յարգուեցաւ զոհներուն յիշատակը: Տասնեակ հազարաւոր ամերիկացիներ ճաղկներ վետեղեցին «Կրաունտ փրոյիլն» (փոկ եկած աշտարակներուն գետնայարկը) առջեւ:

Նախագահ Ճորճ Պուրճ այս առիթով յայտարարեց. «Մենք պիտի յաղթենք ահաբեկիչներուն»:



Մոսկվ Մինասեան, 11 տարեկան - հայկա

Բ.Ս.Ը.Ս.Ի

ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻՒՊԱՅԻՆ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Այս տարի ես ալ առիթը ունեցայ մասնակցելու Բ.Ս.Ը.Ս.Ի կազմակերպած տարեկան միջ-մասնաճիւղային բանակումին, որ տեղի ունեցաւ 2 - 8 Սեպտեմբերին, Անայի մէջ (Պերաս):

Առաջին երկու օրերը բաւական աշխատել է ետք կրցանք մեր բանակավայրը կազմակերպել, ճոխացնել եւ հայկական մթնոլորտ մը ստեղծել՝ Ծիծեռնակաբերդի, Վասպուրականի եւ այլ պատմական վայրերու կործաններ վետեղելով:

Մեկի համար բանակումին ամէնէն հետաքրքրական օրը Ուրբաթն էր, երբ բոլոր մասնաճիւղերուն արի - արենուջներս հաւաքուեցանք եւ ուղղուեցանք Պէյթ Էտտին, ապա՝ Քասր Մուսա, ուր բազմաթիւ նորութիւններ տեսանք եւ սորվեցանք շատ բաներ:

Այս բանակումը վերջ գտաւ աւանդական խարուկահանդէսով մը, որ շատ ճոխ էր ու այլազան. խարուկահանդէսին մասնակցեցան բանակավայրին բոլոր անդամները:

Իմ եւ ընկերներուս անունով կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել բոլոր կազմակերպողներուն: Այս բանակումը թէ՛ հաճելի եւ թէ՛ դաստիարակիչ փորձառութիւն մըն էր ինձի համար:

ԲՍԸՍԻԿ ԼԱՏՈՅԵԱՆ (11 տարեկան)

ՄԵՐ ԿԱԶԴՊՈՒՐՄԱՆ ԿԱՅԱՆԸ

Կազդուրման կայանի երեք շաբաթներուն ընթացքին շատ անման օրեր անցուցի Այնճարի մէջ: Ամբողջ կայանը բաժնուած էր տարիքային բաժանումներու եւ իւրաքանչիւր խմբակ ունէր իր անունը: Կային՝ կատու, թիթեռնիկ, հրեշտակ, Օձ, Մուկ եւ հայաստան խմբակները:

Մենք ունեցանք մեր յայտագիրները, պատրաստեցինք ձեռագիր աշխատանքներ, կատարեցինք պտոյտներ, սորվեցանք երգեր եւ պարեր:

Առիթ ունեցանք այցելելու ագարակ, ճաշարան, մանուկներու խաղավայր, Այնճարի բերդը եւ Բայաթի օդուժի պօրանոցը:

Այդ երեք շաբաթներուն ընթացքին ոչ միայն սորվեցանք, այլ նաեւ գործադրեցինք այլազան գիտելիքներ:

Անի Դարբինեան (11 տարեկան)

ԴԷՊԻ ՅՈՒՆԱՍՏԱՆ

16 Յուլիս 2002ը երազային օր մըն էր ինձի համար, որովհետեւ առաջին անգամ ըլլալով պիտի մասնակցէի Յունաստանի մէջ ԲՕՄԻ կազմակերպած ճամբարին:

Առաւօտ կանուխ մեկնեցանք դէպի օդակայան: Բաւական սպասել է ետք բարձրացանք օդանաւ եւ քանի մը վայրկեան ետք օդանաւը սկսաւ սաւառնիլ դէպի Յունաստան: Երկու օդանաւ փոխել է ետք վերջապէս հասանք մեր բանակավայրը:

Բանակավայրը բաւական մեծ տեղ մըն էր: Մենք՝ բանակողներս, թիւով հարիւր հոգի, բաժնուած էինք վրաններու փոխարէն վեց տնակներու մէջ: Նաեւ ունէինք պասքէթի եւ ֆութպոլի դաշտեր: Բանակումը միայն երեք շաբաթ էր: Առանց զգալու սահեցան օրերը:

Բանակումին ընթացքին ճանօթացայ բազմաթիւ ընկերներու եւ սիրեցի վանոնք:

Իսկ մեր յայտագիրը գրեթէ ամէն օր նոյնն էր: Ամէնէն սիրած պահս ընկերային պահն էր, երբ գիշերները խաղեր կ'ընէինք եւ կամ մեր դասախօսութիւններուն մասին վարձապահ մըրցում կը կազմակերպէինք: Ծատ սիրեցի Յունաստանը եւ մանաւանդ բանակումը: Կը փափաքիմ, որ դարձեալ կազմակերպուին ճամբարներ եւ բոլորին առիթը տրուի, որ տեսնեն նոր երկիրներ:



ԱՅՆՃԱՐԻ ՄԷՋ

Բանակում 2002, վրաններու տակ մէկ շաբաթ չարքաշ կեանք:

Ես Սարդարապատ ակումբի երէց պատանի մըն եմ եւ Օգոստոս 18էն 25 Այնճարի մէջ ունեցայ շատ հաճելի բանակում մը:

Առաջին օրը 15 պատանեկան միութիւններով Պէյրութն ուղղուեցանք դէպի Այնճար եւ հաստատուեցանք բանակավայրին մէջ: Բոլորին դէմքերը ժպտուն եւ գոհունակ էին: Դրօշակի արարողութենէն ետք շուտով անցանք մեր աշխատանքներուն: Ունեցանք չորս խումբեր՝ Կարմիր, Կապոյտ, Նարնջագոյն եւ Ծերմակ: Այս վերջինը կը յիշեցնէ Արցախի դրօշակը, իսկ խումբերուն անուններն էին Մհեր Զոյհաճեան, Կարօտ, Վիգէն Զաքարեան եւ Թաթուկ Կրպէեան: Այս տարուան բանակումը նուիրուած էր Ծուշիի ապստաղման տասնամեակին: Բետեաբար մէկ շաբաթուան ընթացքին սորվեցանք Ծուշիի պատմութիւնը եւ տեղեկացանք ապստաղման ճրագիրին յաջողութեան գաղտնիքին եւ սորվեցանք զոհուած ֆետայիներուն մասին: Ունեցանք կլոր սեղան մը, ուր քննարկեցինք Արցախ-Ալրպէյճան հարցերը եւ եւ ԱԲԿԻ դերը այս բոլորին մէջ: Ունեցանք նաեւ լեռնարշաւ մը, որուն ընթացքին յուշակոթող մը վետեղեցինք «Մենք Անկեղծ Զինուոր ենք» երգով:

Դժուար է բացատրել անձնական զգացումներս: Տակաւին պատանի հասակիս կը բարձրանամ լեռ, վայրկեան մը ես զիս երեւակայեցի Արարատ լեռան վրայ... եւ... յանկարծ հաճելի վեփիւռէն սթափեցայ: Բոլորը երազ էր, բայց ուփտեցի այդ երազը իրականացնել: Այս բոլորին կողքին ունեցանք մարմական խաղեր, ինչպէս՝ մինի ֆութպոլ, փուլ, նշանառութիւն, նաեւ՝ մրցում բանակավայրի, լուսարանի, խոհանոցի մաքրութեան եւ, առաջին անգամ ըլլալով, «Բատիօժամ»:

Ինձի համար ամէնէն յիշատակելի դէպքը խոստման արարողութիւնն էր, երբ խումբ մը պատանիներ խոստացանք լաւ պատանիներ ըլլալ:

Եօթնօրեայ հաճելի բանակումէն ետք բաժնուեցայ Այնճարէն:

ԱՐԱՋ ԳՈՃԱՅԵԱՆ